

ԳՐԱԴԻՍՈՒՄՈՒԹՅՈՒՆ

ԱՂՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՁԵՌՆԱԳՆՆ ԸՆԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՃԵՄԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Գեոդազիայի հոգևոր ճեմարանի (Աստվածաբանական համալսարան) ուսանողությունը 2013-2014 ուսումնական տարում հիանալի նվեր ստացավ: Լույս տեսավ ԳՆԸ-ի երկարամյա դասախոս, բանասիրության դոկտոր, ճանաչված միջնադարագետ Վարազ Ներսիսյանի հեղինակած «Նայ հին գրականություն» բարձրաժևած ձեռնարկը¹, որն ընդգրկում է հայ գրականության մյուս տասններեք հարյուրամյակի զարգացման մի ընթացք՝ հայ գրերի գյուրից ու մայրենագրության սկզբնավորումից մինչև Մայաթ-Նովա: Ձեռնարկի շարադրման համար բնականաբար պիտի գրական բնագրերի հետ միասին հիմք ծառայեին նաև այդ ձիգ ընթացքում ստեղծված հոգևոր-գրական արժեքների վերաբերյալ եղած գիտահետազոտական աշխատանքները, որոնց հիմնական մասը ներկայացված է ձեռնարկի վերջում տրված գրականության ցանկում: Ինչ խոսք որ այդ ամենի հետ ճանաչված միջնադարագետին մեծապես օգնել են գիտական իր ողջ գործունեության ընթացքի ձեռքբերումները, հետազոտական (Մատենադարանում, ձեռագրերի էջերում երկար տարիներ կատարած պրոպագանդայի) ու մանկավարժական աշխատանքի, դպրոցական դասագրքերի շարադրման ինչպես նաև տվյալ շրջանի համար ստեղծած բուհական քրեատմապիստների հարուստ փորձը: Գիրքը ԳՆԸ ուսումնական ծրագրի պահանջներով ստեղծված, թեմաների գիտամանկավարժական բարձր հմտությամբ համակարգված ու մշակված, իր տեսակի մեջ լավագույնի նմուշ է:

Այսպես «Առաջաբանը» հանգուցային դեր ունի դասընթացի ներածական գիտելիքները ամփոփ ներկայացնելու գործում: Նրա բնորոշ վերնագիրն արդեն՝ «Նայ գրականության սկզբնավորումը», կանխել է ամեն ավելորդաբանություն, իսկ նույնքան բնորոշ ենթավերնագրերը («Նայ մշակույթը խոր հնադարում», «Նայ գրերի գյուրը. Մեսրոպ Մաշտոց», «Թարգմանական գրականություն») նպաստել են շարադրանքը հնարավորին չափ համառոտելուն, որպեսզի դասընթացի էջերը անմիջապես ծրագրային նյութերին տրամադրվեն:

Այսպես ցանկանում եմ մի մանրությամբ Ներսիսյանին բնորոշ նորամտության

¹ Վարազ Ներսիսյան, Նայ հին գրականություն, Ուսումնական ձեռնարկ, Ս. Էջմիածին, 2013, 248 էջ:

փաստ ցուցադրել: Նա կարող էր, իհարկե, «Առաջաբանի» «Նայ գրականության սկզբնավորումը» վերնագրից անմիջապես հետո դնել առաջին ենթավերնագիրը՝ «Նայ մշակույթը խոր հնադարում», հագիվ վեց փող կազմող իր միտքը՝ հայ ժողովրդի՝ Նայական լեռնաշխարհում կազմավորվելու, որպես ազգ ձևավորվելու, մի ընդհանուր անուն ստանալու, իր պերականությունն ու քաղաքակրթությունն սրելով՝ մասին արտահայտվել և հետո շարունակել հայկական դիցարան-պանթեոնի մասին իր խոսքը:

Այդպես չի կարարել:

Ազգային ինքնության այդ վկայագրումը նա ներկայացնում է անկախ դիրքով ու այնպես, որը վայել լինի, Միքայել Նալբանդյանի բառով՝ **անտիկյան** ազգին:

Առաջին այդ ենթավերնագրի շարադրանքում հեղինակը փաստերի խիստ ու սեղմ վկայակոչումով անհրաժեշտ պարկերացում է փալիս հայ մշակույթի նախագրային շրջանի մասին և հիմնադրության ճանաչողությամբ մի բարձր գնահատական է փալիս հայ հին բանահյուսությանը՝ Գողթան երգերին:

«Վիպասանքը, - գրում է Ներսիսյանը, - արագցել է հին հայերի կենցաղը, սովորությունները, հարեան փարբեր ցեղերի հետ ունեցած հարաբերությունները, նրանց պարկերացումները քաջության, արդարության մասին: Գողթան երգերը հորինվել են Մեսրոպյան գրերի սրելծումից շատ դարեր առաջ: **Դրանք իրենց լեզվական մշակվածությամբ գալիս են ապացուցելու, որ դեռ վաղնջական ժամանակներում հայերեն խոսքն արդեն հասած է եղել կենդանի, արտահայտիչ ու հստակ լեզվամրածողական մակարդակի»** (10; ընդգծումն իմն է - Խ.Վ.):

Այս գնահատականը հատուկ նշանակություն ունի հայ գրերի գյուրից հետո ծավալված մշակության մեծ փեղաշարժը պարճառաբանելու և իմաստավորելու համար, մանավանդ, որ Ներսիսյանը ոչ մի ակնարկ չի կարարել նախամեսրոպյան հայ գրերի գոյության վարկածի մասին...

Երկրորդ ենթավերնագրում, հիմնականում Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը բնութագրվելով, անհրաժեշտաբար օգտագործվել են Կորյունի վարքագրական երկում պահպանված հավաստի, անփոխարինելի փեղեկությունները, և, իհարկե, նաև ըստ էության բնութագրվել Կորյունի անձը և գործը: «Լինելով վարքագրական ժանրի սրելծագործություն՝ Կորյունի գիրքը միաժամանակ հայ գրի ու գրականության առաջին պարմությունն է, մեծարժեք մի վավերագիր, որ մանրամասն, հավաստի ու հարուստ փեղեկություն է հաղորդում ազգային գրերի սրելծման հանգամանքների, թարգմանական աշխարանքների և առհասարակ հայ մրավոր գարթոնքի մասին», - գրում է Ներսիսյանը (12):

Մեսրոպ Մաշտոցի գործունեության ամփոփումը միաժամանակ նախապարասարումն է «Առաջաբանի» երրորդ, վերջին հարվածի շարադրանքի, ուր արժանի շուքով բնութագրվում է հայագիր գրականությունն՝ իր երկու ճյուղերով՝

թարգմանական եւ ինքնուրույն. միաժամանակյա մի գործընթաց, որ շարունակվում է հաջորդ դարերում:

Եւ քանի որ ինքնուրույն մեծ հեղինակների թեմաներով է բացվում դասընթացը (գլուխ առաջին), ուստի նախորդող այս էջերում, ինչպես ենթավերնագիրն է ուղղորդում, բնութագրվում են թարգմանական գործերը եւ առաջին հերթին **թագուհի թարգմանություն**ը Ասրվաձաշունչը (Ֆրանսիացի Լա Կրոսի գնահատականն է հնչեցնում Ներսիսյանը), որն «իր լեզվական բարձր որակով ու բովանդակությամբ խոր հետք է թողել հայ ժողովրդի հոգեբանության, ազգային բազմաճյուղ մշակույթի վրա (15):

Ասրվաձաշնչից հետո եկող թարգմանական երկերը հիմնականում երկու բնույթի են՝ կրոնականեցական բովանդակությամբ (Ժամագիրք, Ճաշոց, ճառեր, խրատներ, կանոններ...) եւ գիրական բնույթի երկեր («Գիրք պիտոյից», Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ», Թեոն Ալեքսանդրացու «Ճարտասանական վարժություններ» ձեռնարկները, ինչպես նաև Պլատոնի, Արիստոտելի, Պորփյուրի աշխարհայնությունները, այդ թվում նաև գրական գործեր, որոնցից լավագույնն է դիվանը Ե. դարի թարգմանություն «Պարամութիոն Ալեքսանդրի Մակեդոնացու» երկը:

Որքան ըստ էության է հնչում Ներսիսյանի խոսքը՝ պարամական մեծ երևույթները բնութագրելիս. «Թարգմանությունը մի անհրաժեշտ ու անշրջանցելի փուլ էր ինչպես գիտության փարբեր բնագավառների հետ առնչվող հայերեն հասկացությունների սրելծման, այնպես եւ զարգացման նկատելի արդյունքների հասած երկրների փորձը յուրացնելու առումով» (15):

Թարգմանական աշխատանքներին գուգահեռ ասպարեզ են իջնում մեր ականավոր պարմիչ-գրողները՝ ձեռավորելով այն փառավոր մշակութային ժամանակաշրջանը, որ հայրնի է Ոսկեդար անունով:

Անհնար է չզգացվել, անգամ չհուզվել այն գիրակցումից, որ «հնացեալ ձորձոյ օրինակաւ» երկուսի պարտված եւ առանց գրավոր հիշատակի պարամությունից հեռանալու վրանգին մարնված մի ժողովուրդ կարողանում է համաշխարհային հետաքրքրություն ներկայացնող քաղաքակրթություն սրելծել, որը բառի սրույզ իմաստով սկզբնվորվել է մարդկային ինքնօրինակ մի երրորդության շնորհիվ, երբ նրանցից ամեն մեկը յուրովսանն նվիրվել է ազգային փրկարար գործին... Եւ էին նոքա անձինք նուիրեալք եւ լույս հիշատակի՝ Վռամշապուհ Արշակունի, Սահակ Պարթև, Մեսրոպ Մաշտոց:

Ներածական-նախապարասրական հարցերը «Առաջաբանի» սուղ շրջանակում ամփոփելուց հետո ձեռնարկի ողջ ծավալը փրվել է ժամանակագրորեն համակարգված գրական նյութերին՝ ձեռավորելով թեմատիկ հինգ գլուխ՝ դասավանդման քսանհինգ թեմաներով:

Այս կառուցվածքը եւ նյութերի նորմավորված առանձնացումները արտացոլում են դասընթացի ավանդման ողջ դրվածքը:

Ձեռնարկի «Առաջաբան»-ում լուծվել է նաև «Գլուխ առաջին»-ի ներածական խոսքի հարցը: Այսպես, ձեռնարկի առաջին գլուխը, ի տարբերություն մյուս չորս գլուխների՝ ներածական խոսք չունի, թեև գրքի բովանդակության ցանկում կարդում ենք «Գրականությունը Ե. դարում» վերնագիրը: Բայց այդքանը միայն: Որովհետև ինչ այդ վերնագրի ներքո պիտի գրվեր, արդեն համարյա կա նույն «Առաջաբանի» երրորդ՝ «Թարգմանական գրականություն» ենթավերնագրի ներքո, որին անմիջապես հաջորդում է «Գլուխ առաջին»-ը: Լավ կլիներ, իհարկե, եթե այնպեղ մի պարբերությամբ արժանին հարուցվեր Եզնիկ Կողբացուն (որ անգամ անվանապես չի հիշարակվել), նրա «Եղծ աղանդոց»-ի եւ Ե. դարի նշանավոր այրերից՝ Նովիան Մանդակունի Կաթողիկոսին՝ նրա ճառերի գրական գծերը բնութագրելով:

Վարազ Ներսիսյանի գործը նրա՝ մեզանից բացակայելու պայմաններում գրախոսելիս (ցավոք չհասցրեց րեսնել իր ձեռնարկի լուսընծայումը) բարոյական պարտք է նաև արժանին հարուցելու նրա հիշարակին, մանավանդ, որ նրան գիտեմ ուսանողական տարիներից: Եղել եմ նրա ընկերը, նրա մեջ ճանաչել անբասիր քաղաքացին, գիտնական-մտավորականը, առանձնահատուկ հմայքի տեր անհատը:

Թիֆլիսից նա Երևան էր եկել քսանամյա իր տարիքին անսովոր ընթերցանության պաշարով: Նրաշալի մայրենիի հետ նա տիրապետում էր վրացերեն եւ ռուսերեն լեզուներին եւ ԵՊՀ-ում դրանց պիտի գումարեր Ֆիրդուսու եւ Խայամի լեզուն...

Ներսիսյանի հայերենը՝ ձեռնարկի լեզուն, լեռան աղբյուրի պես է լեռնիվար իջնող իր երաժշտականությամբ, իր ազգային մեղեդիով: Ձեռնարկն ընթերցելիս քեզ աննկատ եւ անընդհատ սնում է այդ հայրենի մեղեդին, որ համարյա զերծ է մեր լեզուն այսօր ծվափող, նրա արտահայտչական ճոխությունները աղքատացնող, աղճատող օտարաբանություններից, երբ դարերով մշակված, կարարելացված լեզվաարտահայտչական հարստությունները թաղվում են մեր լեզվին խորթ, օտար կաղապարների մեջ:

Ձեռնարկն իր ամբողջությամբ հայերեն օրինակելի մտածողության ընդարձակ մի դաս է՝ ուսանողին եւ բոլոր ընթերցողներին:

Բնավ չստիպանցում չէ, որ գրախոսվող այս ձեռնարկի արժանիքներն սկսվում են նրա հեղինակի անունից...

Նարկ է ավելացնել նաև, որ Վ. Ներսիսյանի՝ Գետրգյան հոգևոր ճեմարանում իր վարած դասընթացի համար սրեղծած ձեռնարկը այն առաջիններից է (եթե ոչ՝ առաջինը) որ արտահայտությունն է Վեհափառ Կաթողիկոսի՝ դասախոսական գումարումների ժամանակ հնչեցրած ցանկության, թե յուրաքանչյուր դասախոս պիտի աշխատի իր դասավանդած առարկայի ձեռնարկն սրեղծել:

Նայ գրականության հին ու միջնադարյան շրջանի համար ուսումնական ձեռնարկ սրեղծելուն Վ. Ներսիսյանը բոլոր առումներով էր պատրաստ: Նա

ոչ միայն փասնամյակներով զբաղվել է շրջափուլի գիտական հետազոտմամբ, այլև երկար տարիներ գլխավորել է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի փվյալ բաժնի աշխատանքները:

Ուսումնական յուրաքանչյուր ձեռնարկի համար ամենից էականը գիտականության չափի հարցն է, որին լիովին պատրաստ է եղել Ներսիսյանը: Նա բոլոր առումներով ունակ ու կարող անհատ է, ճանաչված միջնադարագետ՝ գրական նյութի, այդ նյութի շուրջ սրեղծված հայրուստի հետազոտական գրականության լայն իմացությամբ, ընդսմին «իր» բնագավառը ԳՀՃ-ում տարիներ շարունակ դասավանդելու փորձառությամբ:

Երբ ուսումնական ձեռնարկի գիտականության մասին է խոսքը, ապա պիտի նկատի ունենալ, թե ինչ չափերով է հեղինակը օգտագործել անցյալում ու ներկայում ծավալված գիտահետազոտական աշխատանքների՝ համընդհանուր ճանաչում գրած նվաճումները: Չէ՞ որ ձեռնարկի հեղինակի՝ փվյալ շրջափուլի մասնագետ է հետազոտող լինելը դեռ բավական չէ: Նա պիտի գիտահետազոտական այդ ամբողջ հարստությանը քաջագիտակ լինի: Նյութի իր տարածուն իմացությամբ է գիտամեթոդական կոու մրաժողությամբ Ներսիսյանը հասել է նյութը գիտականորեն մինչև վերջ չափավորելուն է նյութերի ընտրության մի բարձր մակարդակում այն ամբողջացնելուն, ամփոփելուն:

Ասվածի պերճախոս արտահայտությունը ձեռնարկում ուսումնական թեմաների արդեն նշված փաստագիտական հագեցվածությունն է՝ գիտականորեն անխոցելի:

Միշտ պիտի նկատի ունենալ Ներսիսյանի շարադրանքի գլխավոր առանձնահատկությունը՝ համեմատաբար փոքր ծավալի մեջ նյութի մեծ խտացում կատարելը:

Նկատված չափերի իր արժանիքներով հանդերձ՝ գրված լինելով ԳՀՃ ուսումնական ծրագրով, այն որպես ձեռնարկ կիրառելի է միայն աստվածաբանական ուսումնական հաստատություններում, **սակայն իբրև ընթերցանության գիրք**՝ նրա պիտանելիությունը անսահմանափակ է՝ բոլոր հասանելի տարիքների, կրթական-մասնագիտական ամեն բնույթի դեպքերում՝ ներառյալ հայագիտական կրթության բուհական ճյուղերը, հանրակրթական ավագ դպրոցները, ինչ թերումով էլ դրանք լինեն: Ձեռնարկը բոլոր-բոլորին ազգային-գրական դաստիարակության ու ճանաչողության ցանկալի նպաստ կարող է բերել մեր՝ աղաղակող չափերով ազգային տեղադրության օրերում: Այո՛, Ներսիսյանը խորապես է տիրապետել համեմատաբար սեղմ ծավալով շատ բան արտահայտելու «գաղափարներին», ինչու չէ՞ նաև արվեստին: Այստեղից է գալիս այն առանձնահատկությունը, որ ձեռնարկը կարող է օգտակար լինել հոգևոր ինքնաճանաչման հետամուտ յուրաքանչյուր հայի, ամեն ընթերցողի: Եւ սակայն այդ չափերով տարածուն ճանաչողական պիտանությամբ ու անհրաժեշտությամբ հանդերձ՝ ԳՀՃ-ն իր կրթական առանձնահատկություններով, նյութերի

գիրամանկավարժական մշակմամբ այնքան է նրանում արտահայտվել, այնքան է «սրելայնացվել», որ հենց այդպիսով արդեն Մայր Աթոռի հովանու փակ գործող ուսումնական հաստատությունից դուրս **պաշտոնապես գործադրելը** ինքնաբերաբար կանխվել է:

Ձեռնարկի նյութերը իրենց գիրամետոդական բարձր մշակվածությամբ ինքնին ընդգծել են գրականությանը բնորոշ հերաբրբրությունն ու գրավչությունը, որոնք խոսքարվեստի մասնահատկություն լինելով՝ **ազգային գիտության** արժեք են ստացել (ընդգծված արտահայտությունը Դանիել Վարուժանինն է):

Ձեռնարկի բոլոր գլուխների ներածական էջերը գրական վերնագրեր ունեն՝ որոշակի դարի կամ դարերի անուններով, որոնցում միշտ նախ ամենաընդհանուր կարգով ազգային կյանքի պատկերներ են ներկայացվում՝ ընկերային-քաղաքական հանգամանքներով, ապա անդրադառնում գրական կյանքի առանձնահատկություններին: Ժամանակի գրական ակնառու երևույթներին արդեն առնչվում ենք գլուխը բովանդակող թեմաների շարադրանքներում:

Նամաբնույթ ներածականներից առաջինը՝ «Գրականությունը Ե. դարում» միայն անվանապես է առկա ձեռնարկի բովանդակության ցանկում՝ անվանումների համակարգը ձևականորեն պահելու համար: Այդ վերնագրով շարադրանքի կարիքը չի զգացվել (արդեն նկատել ենք), որովհետև նախորդ էջերում («Առաջաբանի» մեջ) այդ բովանդակությունը լիովին արտահայտվել է «Նայ գրերի գյուրը, Մեսրոպ Մաշտոց» և «Թարգմանական գրականություն» ենթավերնագրերի շարադրանքում:

Միանգամայն փրամաբնական է մեր խնկելի թարգմանչաց մասին անմիջապես գրերի գյուրից հետո խոսելը, քանի որ Ե. դարի առաջին փասնամյակների ողջ եռուգետը գրնվել է մեծերից մեծի՝ Մեսրոպ Մաշտոցի՝ ընդհանուր վերահսկման ներքո, և այդ ամենը լիովին բավական է դիտվելու իբրև Ե. դարի լուսավորական-հոգևոր կյանքի ներածական:

Ձեռնարկում հայ հին գրականությունը ամփոփ ներկայացնելու հաջողության հիմնապայմանը նրա բազմադարյա պատմության մայրուղին հարակճանաչելու հեր մայրուղային նշանավոր երևույթներն առանձնացնելն ու գիրականորեն մշակելն է: Գրքի հինգ գլուխները ձևավորելիս Ներսիսյանը առաջնորդվում է ոչ թե ժանրային, այլ ժամանակագրական սկզբունքով, պատմաշրջանն իր նշանավոր դեմքերի ժամանակագրական փոփոխությամբ՝ անկախ ժանրային առանձնահատկություններից: Այդպիսով՝ ավելի քան փեսանելի են դարձել պատմաշրջանի գրական մշակույթի առանձնահատկությունները և գրական ժամանակաշրջանը:

Եւ այսպես, առաջին գլուխը ներկայացնում է Ե. դարի մեր բոլոր պատմիչ-գրողներին և գրական միափարբությամբ միակ գլուխն է՝ Ազաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Եղիշե, Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի կազմով:

Նեղինակը գրական բնորոշ վկայություններ է բերում ոչ միայն Ազաթան-

գեղոսի մարյանի՝ աշխարհիկ կյանքին վերաբերող էջերից, այլև կրոնական բարձր պաթոսի պարկերներից, որի հիանալի օրինակ է Գրիգոր Լուսավորչի փեսիկի նկարագրությունը, որից հետո պարմիչից բերված բնորոշ փողերին հաջորդում է իր ընդհանուր գնահատականը. «Ազաթանգեղոսի պարմության գրական պարկերավոր հորինվածքն ակնհայտ է» (22):

Փավստոս Բուզանդի «Նայոց պարմության» գրական արժանիքների վերաբերյալ փալավորիչ ցուցադրումներին հաջորդում է հեղինակի ինքնափայմի գնահատական. «Այս առումով (նկարի ունի գրական արժանիքները - Խ.Վ.) թերևս կարելի է պայմանականորեն ընդունել, որ Փավստոսը եղել է հայոց հնագույն շրջանի մեր առաջին բանահավաքներից մեկը» (26):

Եղիշեն մեծ, ոսկեծղի երեսույթը գնահատելիս, հենվելով Մ. Աբեղյանի անվիճելի փորձաքննության վրա, Ներսիսյանը միաձուլում է անցյալում Եղիշեի կապակցությամբ հակասական կարծիքները: Ըստ այդմ՝ մի կողմից Եղիշեի պարմությունը աչքի է ընկնում «Ե. դարի քաղաքական կյանքի ճշմարիտ վերաբերադրմամբ», մյուս կողմից՝ այն «զուր պարմագիրական աշխարհություն չէ, այլ գերազանցապես գրական-գեղարվեստական հրաշակերտ ստեղծագործություն...» (34):

Մեծ երեսույթներին այլոց փակված դիպուկ գնահատականները ուսանողի սեփականությունը դարձնելու նախասիրությունը այսպեղ արտահայտվել է նաև Եղիշեի կապակցությամբ հետևյալ իմաստուն գնահատականով, որ «Վասն Վարդանայ և հայոց պարերագմին» գիրքը **«սիրելիների համար համարվել է մխիթարություն, հուսացողների համար՝ հույս և քաջերի համար՝ քաջալերություն»** (35):

Սեղմ ու փալավորիչ է մեր պարմահոր թեման՝ «Կյանքն ու վաստակը», «Նայոց պարմություն», «Կառուցվածքը», «Պարմության առանձնահատկությունները», «Նայոց պարմության գրական արժեքը», «Խորհենացին և ժողովրդական բանահյուսությունը» ենթավերնագրերով դրվագված:

«Նայոց պարմությունը» գնահատելով որպես հայ պարմագրության բացառիկ նվաճում՝ Ներսիսյանը նախ այն բնութագրում է բերած մեծ նորություններով՝ ա) որպես առաջին ամբողջական պարմություն, որն սկսվում է հայ ազգի կազմավորման շրջանից և հասնում մինչև պարմիչի ապրած օրերը, բ) որ այն բացառիկ է անգամ այժմ գիտությանն անհայտ պարմական ամենաբազմազան աղբյուրների օգտագործմամբ՝ ընդհուպ բանահյուսական նյութերը՝ դրանց հետ կապված՝ պարմիչի մոտեցումների պարզաբանմամբ, գ) որ օգտագործած փաստերի ու փվյալների նկարմամբ ըննական վերաբերմունք դրսևորելուց հետո է պարմիչը դրանք արժեւորել, այդպիսով, առաջին հայ ըննական պարմությունը շարադրելով, դ) Խորհենացին վճռական նշանակություն է փվել ժամանակագրական փվյալների օգտագործմանը, որոնցով բարձրացրել է հաղորդած նյութերի գիտական արժեքն ու արժանահավատությունը, ե) պարմիչը սերունդ-

ներին բարձր գիտակցությամբ դաստիարակելու նպատակով առանձնացրել է պարմական՝ կորովի, հզոր դեմքերի՝ մասնավորապես Տայկ և Արամ նահապետներին, Տիգրան Մեծին՝ նրանց սխրալի վարքի մեծարումով...

Այսպես, «Բնութագրելով Տիգրանին, - գրում է Ներսիսյանը, - Խորենացին չի թաքցնում նաև իր նպատակը՝ ի դեմս նրա կերպել օրինակելի կերպար» և բերում է պարմահոր համապարասխան դարողությունը (տե՛ս 43): Այս նույն ոգով Ներսիսյանը բնութագրում է նաև մեծանուն պարմիչին:

«Գրքի էջերից, - գրում է Ներսիսյանը Խորենացի մարդու ու մարենագիր իմաստունի մասին, - մեր դեմ է հառնում նաև պարմագիրը, որի անհապակա-նության բնորոշ գծերն են հայրենասիրությունն ու ազգային նախանձախնդրու-թյունը, երեսյունների նկատմամբ դրսևորած որոշակի վերաբերմունքն ու խոհա-կան խառնվածքը, վարակիչ ոգևորությունն ու **ազնիվ թախիծը**» (43-44): Մեր աչքերի առջև վեր է հառնում պարմահոր ողբի քաղաքական ու բարոյական ուսանելիության ողջ խորհուրդը: Նա իր ժողովրդին զգուշացնում է օտար լծի մահացու ներգործության վրանգից, թե տեսե՛ք դրա հետևանքները. «Իրակա-նության մեջ չի մնացել որևէ հուսալի բան: Բոլոր դասերն ու խմբերը կորցրել են իրենց դեմքը, ուրացել են կոչում և պարսկականություն», ու բերում է պարմահոր ողբի ամենաազդեցիկ տողերից մի քանիսը՝ «աշակերտք հեղձք առ ուսումն և փոյթք առ ի վարդապետել» սկսվածքով (47):

Վերը մեր ընդգծած դարձվածք չի կարող ընթերցողին խորհրդածություն-ների չնդել: Եւ, իրոք, ապշեցուցիչ չէ՞ ձեռնարկի հեղինակի նրբամարությունը, երբ նա պարմահոր հուզախոթիվ հոգեվիճակը՝ նավաբեկ հայրենիքի համար փառա-պանքի 9-րդ ալիքի չափերով, նվազաբերման մի ստոյիկական կարողությամբ տեղավորում է «ազնիվ թախիծ» արտահայտության անձուկ փառողության մեջ:

Մասնագիտական փայլով է Ներսիսյանը շարադրել «Տայոց պարմության գրական արժանիքները» ենթաբաժինը:

Բնորոշ դիտարկումների մեջ նա ընդամենը ակնարկում է պարմիչի մի գեղարվեստական մանրակերպ՝ հաշված տողերով ամբողջացրած Երվանդա-կերպի բնագեղ պարկերը՝ գեղեցիկ կնոջ դիմանկարի տեսքով:

Արժեք Խորենացի գեղագետի այդ կերպ դիմանկար կերպելու կարողու-թյամբ հիանալ: Նա նաև հաշված բառերով պարկերի քրեատմաբանական նմուշ է կերպում, և արժեք ձեռնարկում այս բնութագիր-դիմանկարը եւս տեսնել. «Գոյր տեսլամբ հրեշտակական, մրօք ծննդական, բանիւք պայծառ, գործօք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարասիւք անճառ, խորհրդավորութեամբ մեծ, հաւա-րով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ»:

Նոգետոր դասին, հոգետոր դասը համալրելու եկող ճեմարանական սերունդ-ներին ուղղված անհրաժեշտ վարքի ինչպիսի մաղթանք... ի դեմս Մեսրոպ Մաշ-տոցի բնութագրի:

Ձեռնարկում վեր է հանվել «Տայոց պարմության» խաղացած պարմամշա-

կութային հսկայական դերն ու նշանակությունը: Ուսումնարենչ սերունդներին ազգային ինքնաճանաչողությամբ եւ գաղափարական հաստնությամբ զինելը, հայրենիքի բախարի նկարմամբ զգայուն, պարասխանարու վերաբերմունքով դաստիարակելը դիւրվել է «Նայոց պարմության» անցած ողջ ճանապարհի եւ անցնելիք ուղու բուն խորհուրդը:

Այս գլուխը ամփոփող Ղազար Փարպեցու կապակցությամբ բավարարվենք հետեւյալ խորիմասպ առանձնացումով:

Ձեռնարկի թեմաները անհամեմար հարուստ են բովանդակությամբ, քան զուր արտաքուստ կարող են ասել նրանց ծավալները՝ (թող կրկնություն չդիւրվի): Այս կապակցությամբ բավական է նկատել՝ այնքան բժախնդրորեն են մշակվել դրանք, որ միանգամայն անկաշկանդ շարադրանքում էլ դրանց փաստական հագեցածությունը հասցվել է հնարավորի սահմաններին: Ավելին, որը ոչ երբեք է երկրորդական. ձեռնարկն ընթերցելիս մեկնական ու արտահայտման թարմություն, գրականագիտական մտրեցումների ավելի քան զգոնություն ես ապրում եւ հոգեկան բավարարվածություն սրանում:

Ներսիսյանը ուշագրավ փաստը, պարմական իրողությունը հաճախ է դարձնում լայն ընդհանրացման հիմք եւ բացում նրա բացառիկ արտասովորությունը, ինչպես Ղազար Փարպեցու կապակցությամբ այս՝ Նվարսակի դաշնագրի ժամանակ քաղաքական հանգամանքների կտրուկ փոփոխության հետեւանքով թշնամու մեջ արտահայտված նոր հոգեբանությունը մեկնաբանելիս:

Պարմիչը վկայում է, որ նոր պայմաններում պարսից տրեությունը հարգանքով էր վերաբերվում ապստամբների նկարմամբ, իսկ ուրացողների վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում: Երբ հայերից մեկը ցանկանում է մտնել ապրան եւ բազմության մեջ բարձրաձայնում է, որ ինքը ապստամբների գնդից է, իսկույն ներս են թողնում, իսկ ուրացողներին թույլ չեն տալիս անգամ ապրանի դռներին մտրենալ:

Փարպեցու այս վկայությունը մեջբերելով՝ Ներսիսյանն այնուհետեւ խորհրդածում է. «Նիշյալ դրվագը որպես մի հագվագյուր իրավիճակի նկարագրություն, հայոց հին գրականության եզակի էջերից է» (70): **Դաստիարակչական որպիսի՝ հեռահար ակնարկ ընթերցողներին, որ ամեն ինչ շուր եւն մոռանում...**

Նայ հոգետր մշակույթի գարգացումը, ինչպես ժողովուրդների կյանքում առհասարակ, առանձնահատուկ պարմական հիմք ու պարճառականություն ունի: Այդպիսով է անխուսափելի դարձել խոհական գնահատականը Ե. դարի մեծ երկունքից հետո Զ.-Թ. դարերի համեմատական ամյության եւ հաջորդող պարբերաշրջանի՝ Ժ.-ԺԲ. դարերի նորացնող ու վերաճնող հոգետր շնչառության վերաբերյալ:

Ոսկեդարը Նարեկացու շրջանին կապող թելերը անցնում են հայոց մեծ Էպոսի՝ «Սասնա ծերի» խմորման դարերի վրայով, երբ ժողովրդի հոգետր

արգանդում ի մի են եկել հազարամյաներից հարստեղ հավաքալիքներն ու պարկերացումները և պարսկա-արաբական դարերի պարմիչների միջոցով մեզ փոխանցված ժողովրդական հերոսապատմությունը: Այս ամենի բնական իմաստավորմանն է ծառայում բնութագրվող շրջափուլի պարմիչ գրողների՝ Սերետսի, Ղևոնդ Վարդապետի և Հովհան Մամիկոնյանի մարյաններում կուրակված անհրաժեշտ փաստանյութը:

Անցումային այս շրջափուլը (Զ.-Թ. դարեր), ինչքան էլ բնույթով բանաստեղծական կուրակումների (հաջորդ շրջափուլի համար) ժամանակաշրջան նկարվի, այնուամենայնիվ Խորենացուն և Եղիշեին Նարեկացու և նրանով նշանավորվող դարաշրջանի հետ կապող թելերի հերաքրքիր ցուցադրում է Ներսիսյանը իրագործել փարբեր ուղիներով՝ արդեն նկարված «Էպոսային» և բանաստեղծական՝ ի դեմս Կոմիտաս Աղցեցու և Դավթակի Զերթողի՝ առաջինի «Անձինք նուիրեալք» բարձրարվեստ շարականի և երկրորդի «Ողբ ի մահն Ջուանշիրի մեծի իշխանի» ողբ-քերթվածի:

Խորհմասս ուսումնական թեմա է Ներսիսյանը ձևավորել մի կողմից պաշտոնական բանաստեղծության երկի (այն էլ Կաթողիկոս-բանաստեղծի գրչով ստեղծված) և մյուս կողմից ժողովրդական գուսան-բանաստեղծի՝ հրաշքով մեզ հասած քերթվածի, որոնցով ուսումնական թեմա ամբողջացնելը ամենից առաջ նրանց փոքրածավալությամբ է պարճառաբանվել:

Կյանքի երկու ծայրաթևերի՝ եկեղեցական և պալատական անուղղակի համադրման մի, արդեն ըստ էության հարազատ, փաստ կա հիշյալ ստեղծագործությունների միջև, որը խոսում է մի կողմից պաշտոնական և մյուս կողմից մեզ չհասած (բացառությամբ Դավթակի ողբի) պալատական աշխարհիկ բանաստեղծության միջև եղած կապի մասին:

Առաջինը Աղցեցին է 36 տնից բաղկացած իր «Անձինք նուիրեալք» շարականի (գրել է 618-ին Հոփսիսմե փաճարի նավակապիքի պարվին) յուրաքանչյուր տուն սկսել հայոց ալբուրենի հերթական գրով, որպեսզի տների առաջին գրերը միասնաբար հողեն ողջ ալբուրենը (Ա-Բ): Ի պարիվ նշանավոր այս շարականի՝ հիշյալ կառուցվածքով հետագայում գրված գործերը կոչվել են «Անձինք»: Ահա «Անձինք»-ով է Դավթակը 670-ին (այդ թվին է դավադրաբար սպանվել Ջուանշիր մեծ իշխանը) գրել իր «Ողբը»...

Ինչ այսպեղ՝ ձեռնարկում, ներկայացված եղանակին է վերաբերում, ապա այն ոչ միայն գիտամեթոդական աններդաշնակություն չի ստեղծում, այլև այդ առումով երևան է բերում ուսուցական որոշակի նպատակասլացություն և, որ առավել կարևորն է, ամենախոսուն ձևով ցույց է տալիս պաշտոնական գրականությունից և եկեղեցուց դուրս, լայն կյանքում ստեղծվող գրականության՝ միմյանց զուգահեռվելու փոսական-իրական փաստի մի դրվագ, որի համար պարական ենք երջանիկ պարահականությանը...՝ ի դիմս Մովսես Կաղանկարվացի պարմիչի զգոնության:

Չփականք «Անձինք նուիրեալք» ու «Ողբ ի մահն Զեւանշիր մեծի իշխանի» անհամասեռ համադրման թեման: Այն ավելի հեռուն քանո՞ղ մտորումների դուռ է բացում: Ըստ այդմ, կարելի է համոզում արտահայտել, որ Նաղաշ Նովնաթանը եւ Սայաթ-Նովան ոչ այնքան միջնադարյան փառերգության՝ Նարեկացուց սկիզբ առնող աշխարհականացման (Նարեկացի, Կոստանդին Երզնկացի, Նովհաննես Թվուրանցի, Գրիգորիս Աղթամարցի) ընթացքի երևույթներ են, որքան Դավթակի ու նրա հաջորդների... Այդ ձիգ ընթացքի ոչ պաշտոնական (դավթակյան) գրականությունը ամենակուլ ժամանակը կորստյան է մատնել: Ո՞վ կարող է ասել, թե ինչ կլինեն ժամանակով մեզ այնքան մոտ Սայաթ-Նովայի դավթարի ճակատագիրը, եթե մի Գևորգ Ախվերդյան չընկներ նրա հեղափոխության վրա...

Դավթակ քերթողի սրելծագործությունը գնահատելիս, Ներսիսյանը եթե այն առանձնացնում է ըստ էության՝ որպես **հեղափոխական շրջանի առաջին աշխարհիկ քերթված**, ապա այդ գնահատականը առանձնացնում է որպես հերոսի սգերգային պանծացում՝ հայրենասիրական, քաղաքական մրայնության: Խորապես բնութագրիչ է Ներսիսյանի խոսքը, ըստ որի՝ Դավթակի քերթվածը «մարդու կյանքի ու գեղեցկության, պերական իշխանության, հասարակական երջանկության կորստի սգերգ է» (75):

Գիտենք, որ Ներսիսյանը սկզբունքորեն խույս է տվել մեր հին գրականության մարտնչական բնագրերի հեղափոխական հարակից ու օժանդակ հարցերից: Նա իր մշակած թեմաները անհրաժեշտաբար հարստացնում է եղած նման հարցերի վերաբերյալ ճշգրտում-պարզաբանումներով, սակայն միայն հիշատակելով կարևոր ծառայության հայագետին: Թեմաների գրականագիտական հարստացումը, ինչ խոսք, բարձրացնում է ձեռնարկի գիտամանկավարժական արժեքը եւ այդ նկարագրումով խիստ անհրաժեշտության դեպքում հարկ է եղել, որ հեղինակն իր շարադրանքի հրեթացս հարստացմանը զուգահեռ բանասիրական աշխարհների վկայակոչում եւս կատարի:

Այդպիսին է «Պարմութիւն Տարօնոյ» պարմագրական երկի հեղինակի ճշգրտման հարցը:

...Հայրենի է, որ մինչեւ հայագետ Գր. Խալաթյանի «Զենոբ Գլակ» աշխատությունը (Վիեննա, 1893 թ.) «Պարմութիւն Տարօնոյ» գրքի հեղինակներ են ճանաչվել Դ. դարի ասորի հոգևորական Զենոբ Գլակը եւ Է. դարի հեղինակ Նովհան Մամիկոնյանը: Մարյանի՝ Զենոբ Գլակին վերագրվող մասի քննությամբ (որին միացել են Աբեղյանը եւ ուրիշներ) պարզվել է որ Տարօնի պարմության երկու մասերում էլ «ստուգաբանությունները սրելծվել են հայոց լեզվամրածողության, հայոց բառ ու բանի սահմանում եւ բացառվում է դրանց թարգմանական լինելը»:

Այս ճշգրտմամբ մի օտարագրի անհատի «Պարմութիւն Տարօնոյ» գրքի հեղինակ լինելը բացառվելով՝ մնացել է պարզել նրա հեղինակի իրականում ով

լինելը, մի ուրիշ, մեզ անհայտ հայ հեղինակ է նա, թե հենց ինքը, երկրորդ մասի հեղինակ Նովիան Մամիկոնյանը:

Պարմության երկու մասերից համոզիչ օրինակների գուգադիր քննությամբ պարզվել է, որ ողջ շարադրանքը միևնույն անձնավորությանն է պատկանում: «Այսպիսով, - եզրափակում է Ներսիսյանը, - թե՛ Զենոբ Գլակին և թե՛ Նովիան Մամիկոնյանին վերագրվող մասերում առկա է արքայացուման նույնակերպ բանաձևը, լեզվաոճական նույն դրսևորումը» (96): Կարարվել է անհրաժեշտ հետևություն. «Պարմութին Տարօնոյ» գրքի ողջ շարադրանքը միևնույն հեղինակին՝ Նովիան Մամիկոնյանին է պատկանում, որի ձեռքի փակ են եղել Ազաթանգեղոսի ու Խորենացու մալյանները, ինչպես նաև օգրվել է ժողովրդական աղբյուրներից, ուր պահպանվել է «Պարսից պարերագմ» ավանդավերայը:

Խորապես համոզված եմ, որ այսօրվա Ներսիսյանը անհրաժեշտը կարարելիս ցանկացել է նաև պարենի առիթով բանասիրական այդ բնույթի աշխատանքի ճաշակ փալ ուսանողին ես:

Ձեռնարկը բնականաբար պիտի ունենար թեմափիլ-մեթոդական այնպիսի առանձնահատկություններ, որոնք պայմանավորվեին ԳՃD աստվածաբանական բնույթով: Օրինակ՝ Կոմիտաս Աղցեցու «Անձինք նուիրեալք» շարականը, արդեն անկախ իր ծավալային՝ թեմա չներկայացնելու չափերից, աշխարհիկ բուռի գրական ձեռնարկի մեջ չէր ներառվի, բայց այսօրվա, ինչպես րեսանք, ծավալի՝ թեմա չկազմելու «խոջրնդորը» լուծվել է այնքան նշանակալից ելքով, որ առանձին, գուր իրենով ուսումնական թեմա չկազմելով, այդպիսին ներկայանա հերմենարայան շրջանից մեզ հասած առաջին աշխարհիկ արեղծագործության հետ և, պիտի ավելացնել՝ նոր, անչափ հարուստ ասելիքի թեմա կազմի (ձեռնարկի բովանդակային ցանկում, իհարկե, ներկայացվելով առանձին, սեփական անուններով):

Ձեռնարկի թեմաների նման մշակումը, երբ փաստերի առարությունից նրանք գրեթե կոնսպեկտային խտության են հասնում, ուսանողի առարկայական կարողությունները ընդլայնելու նոր, գործուն կողմ են դառնում օժանդակ հանձնարարությունները:

Դյուրին չի եղել հեղինակի գործը անարարունջ կերպով աչքի անցկացնել, թեկուզ քաջածանոթ այդքան գիտական նյութը, որպեսզի այնքանից ձեռնարկի թեմաներից յուրաքանչյուրի համար էջերով ու հարվածներով ճշգրտված ծավալի նյութ առանձնացնի:

Սա ձեռնարկի գործնականության րեսակերից արարաբուսար գրեթե չնկարվող, բայց ըստ էության թե՛ գիտակրթական և թե՛ մանկավարժական առումներով արդյունավոր քայլ է: Անհրաժեշտ էջերի փոխարեն ողջ աշխատանքի հանձնարարումը պարզ ձևականություն կլիներ, գրեթե անիրագործելի, բայց այս դեպքում, երբ ուսանողը գիտե, որ առանց երկար-բարակ փնրարութի՝ միանգամից իր ցանկացած էջերը պիտի կարդա, արդեն բանը բոլորովին այլ է: Նարուկ

առանձնացված այդ էջերի ընթերցումից խույս տվող ուսանողը չունի արդարացում: Այս կապակցությամբ արժև գիրակցել, որ մշակված նյութերը նոր կողմերով հարստացնելու և խորացնելու համար հեղինակը նման ճշգրտությամբ հղումներ կատարելու համար որքան բարեխղճություն, որքան համբերատարություն և դեպի ուսանողը սեր է ցուցաբերել ու նրան որքան թանկ ժամանակ նվիրաբերել:

Բանաստեղծականի նուրբ ընկալումների գրականագետ լինելով՝ Ներսիսյանը մի առանձին զգայունությամբ պիտի խորամուխ լիներ միջնադարում հոգևոր հայրերի կողմից ստեղծված կրոնական բանաստեղծության լիակատար փրապեպության պայմաններում արտահայտված երկրային ճանաչելու, գնահատելու հարցի մեջ: Մանավանդ, որ գրական երեւոյթը պարզում ու իմաստավորում է ուսանող սերունդների համար: Որպես լավագույնի շար օրինակներից մեկի՝ բերենք «Գրիգոր Նարեկացի» թեման, որ փասնյոթ մեծադիր էջերով նյութի գիրամանկավարժական մշակման փայլուն օրինակ է:

Ներսիսյանը հենց դարի համապատկերում բնութագրում է Նարեկացու դարակազմի բանաստեղծական սխրանքը: «Գրականությունը Ժ.-ԺԲ. դարերում» ներածականի մեջ նա գրում է. «Հայ մարենագրության մեջ Ժ. դարից սկսած ձեւավորվեց մրավոր նոր հոսանք, որ հակված էր գաղափարական և մշակութային բարենորոգության» (101):

Այս ընդհանրացումը հայ հոգևոր կյանքի լայնահուն ճանաչման հրաշալի դրսևորում է, ուր Նարեկացին առաջինն է ու առաջամարիկը: «Շնորհաշար պարմագիրներից զար (յոթ անուն է թվարկում - Խ.Վ.) ժամանակաշրջանը րվեց նաև գրական շարժումն ուղղորդող արտակարգ մեծություններ՝ Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Մագիստրոս, Հովհաննես Սարկավազ Իմաստասեր, Ներսես Շնորհալի, Մխիթար Գոշ» (201): Այնուհետև Ներսիսյանը նրբամտորեն գրում է. «Սրանց և ուրիշների վաստակով գրականության մեջ սաղմնավորվեց աշխարհականացման ոգին, որ դրվելով կենսունակ ընթացքի մեջ՝ հաջորդ շրջափուլում դարձավ իշխող երեւոյթ» (102):

Ուսումնական, դաստիարակչական նկարառումներով մեծապես նպատակային են նաև ձեռնարկի այն էջերը, ուր արծարծվող նյութերը բնույթով կրոնական են և ծառայում են Հայ Առաքելական Եկեղեցու բարեգաղտմանը՝ թե՛ հանուն դարերով նվիրագործված նրա հայկականության, և թե՛ գալիքները դիմավորող նրա բանական հոսքի անխաթար ընթացքին:

Այս մեծախորհուրդ հեռանկարի հրամայականով են ստեղծվում հոգևոր կյանքի ամենապարբեր բնագավառների վերաբերող գործեր (աստվածաբանական, փիլիսոփայական, քերականական, տոմարագիտական, բժշկական, իրավագիտական...): Ազգային կյանքի նորոգման մի բարձր գործընթաց. նոր հայացքով են վերախմբագրվում եկեղեցու ծիսական կիրառության համար նախատեսված ժողովածուները («Տոնապարճառ», «Տոնամակ», «Ճաշոց», «Յայս-

մատուրք», «Վարք սրբոց», «Շարակնոց», «Գանձարան»): Եւ այս բոլորը ի սպաս «հայության հոգևոր, բարոյական, ազգային ու հայրենասիրական դաստիարակության»:

Ժ.-ԺԲ. դարերի գրականությունը բնութագրող ներածական խոսքում արժանին հատուցելով հիշարարկված հիրավի մեծ անուններից առաջինին՝ Նարեկացուն, Ներսիսյանը գրում է. «Ի՞նչ պարբերություն շարականների, Նարեկացին փառաբանվող սրբություններին անդրադառնում է ոչ միայն ավերարանական բռն ու բանի վերարտադրմամբ, այլև կյանքից, իրականությունից սրացած անհարական ընկալումների պարկերմամբ», եւ ապա նույն Նարեկացու լավագույն սրելոճագործություններից «Տաղ Յարութեան» քերթվածից վկայակոչում հենց այդպիսի փողեր.

Այն ճորպն ճոճ էր եւ ճապուկ,
Ուռամիջակ, հասարաբազուկ,
Լայնաթիկունք, խարսիշագեղ, ահեղագոչ.
Նա ձայն ածէր եզնամուխն,
Կանչին առնէր աթոռակին... (125)

Այս «ցնձագին, գվարթ զգացողությամբ փոգորված» «Տաղ օրինեալ ջրոյն» քերթվածից, ուր ավերիս է փրվում մինչեւ անգամ «քանն Աղամայ», այսինքն ողջ մարդկությանը», բերում բնության շքեղության գմայլելի փողեր.

Ավերին, ծառոց ծաղկանց
բողբոջախիւր, խիւրասաղարթ,
Գոյն գեղեցիկ, պտղինաւեր
ակնահաճոյ, համ քաղցրունակ,
Նով բուրազուարթ, փունջ խոտներամ.
Ծայրից վարդից փթթինազարդ
Թերթ փարածեալ ոսկեճաճանջ.
Կերելախիւր կանաչացեալ: (127)

Այո՛, «Նարեկացին նաեւ կրոնական գաղափարներ է արքայապարտ բնության պարկերներով», եւ «այդպիսին է «Տաղ Վարդավառին» բանաստեղծությունը, որով մեծագույն մեր բանաստեղծը պարկերում է. Զրիսպոսի պայծառակերպությունը»:

Թող Լեւոն Շանթը բանաստեղծական այդ սքանչելիքը կոչի ինն հեթանոս մի սրելոճագործություն, որ Նարեկացին իր պաշտպանության փակ է վերցրել... եւ կամ ինքն է գրել հեթանոս մի փաղի հեղուկությամբ: Մի ուրիշը նույն կերպ մի այլ բան թող ենթադրի: Այդ կարծիքներին ամենեւին փուրք չփառվ, սակայն, Ներսիսյանը նկատում է բանաստեղծի ներքին հզոր մղումը՝ ազգաբազմիկու

ժամանակի քերթողական կադապարված ձևերից, հայ բանաստեղծությանը վերադարձնելու նրան պակասող արևուր բնության կենսական շունչն ու վեհությունը:

Վարագ Ներսիսյանը մեծ բանաստեղծին համակարծիք է, Ավետարանից հղումներ է կարարում, բայց եւ անպարասխան չի թողնում այդ հղումների ու փաղի պարկերների մեծ փարբերությունը. «Վարդավառի փաղի բովանդակությունը, - գրում է նա, - շնորհիվ հեղինակի հզոր փաղանդի եւ բանաստեղծական փայլուն զգացողության, շար է հեռացել իր սնող աղբյուրից: Տաղն ամբողջությամբ ասես մի բնական է ծառ ու ծաղկի, վարդի ու շուշանի, ամպի ու արեգակի, լուսնի եւ աստղերի սթանցելի պարկերներով» (127-128), պարկերներ, որոնց դյուխանքի պարտադրումով գրականագետը իր գնահատանքի փութքն է մարտցում բանաստեղծի գույների ու գյուրերի շքահանդեսին՝ ցուցադրելով «շ»-երի շողով, շաղով, շար մարգարիտներով, «ծ»-երի ծովային ծփանքով զմայլելի նրա բաղաձայնությունները՝ ֆրանսիացի հիանալի վարպետներից քանի՛ դար առաջ կերպած:

Այս անգուգական փաղի մասին խոսքը Ներսիսյանն ամփոփում է նրա բովանդակության ջերմաշունչ քնարական վերարտադրումով:

Ձեռնարկի չորրորդ գլուխը երկու փարբեր կողմերով առանձնահատուկ է. նախ թեմաների կազմով՝ Նայ Առաքելական Եկեղեցու քարոզիչ-առակագիր Վարդան Այգեկցին, ապա Նայրեն թեման եւ հինգ փաղերգու՝ Ֆրիկ, Կոստանդին Երզնկացի, Նովհաննես Թվկուրանցի, Մկրտիչ Նաղաշ, Գրիգորիս Աղթամարցի:

Նայրենները՝ որպես ժողովրդական անանուն գուսան-բանաստեղծների թեման, Ներսիսյանը ներկայացրել է փեսակի (ժանրի) անունով՝ Նայրեն:

Նայրենի հետ կապված՝ ակամա նորոգվում է վերը կարարած մեր դարձողությունը պաշտոնական եւ պալատական բանաստեղծությունները իրար գուգահեռելու թեման: Այդ գուգահեռումը, ըստ երեւույթին, ավարտվել է հայրենների՝ պաշտոնական մարենագրությանը պարկանող փաղարաններ մուրք գործելով:

Նարուկ նշանակություն է սրացել այն իրողությունը, որ դա փեղի է ունեցել Նարեկացուն ներկայացնող պարբերաշրջանի՝ Ժ.-ԺԲ. դարերի ավարտից հետո, հայրենների փաղարան մուրք գործելու սկզբին՝ ԺԳ. դարում:

Ժամանակագրական շղթա կազմող այս փաստը խոսում է այն մասին, որ պաշտոնական բանաստեղծության աշխարհականացմամբ լուծվել է Է. դարից մեզ հայրնի դարձած երկու թեւերը միմյանցից բաժանող անջրպետը:

Մի հարց եւս: Ձեռնարկում հեղինակի ցուցումը, թե հայ գրականության զարգացման «առաջին մեծ շրջանը կոչվում է **հայ հին** կամ **հայ միջնադարյան** գրականություն» կարարված է այն նկարառումով, որ այս նույն ընդգրկմամբ արդեն փարիներ առաջ գիրք է հրատարակել երկրորդ վերնագրով եւ

նրա հետ վերնագրային համարժեքության մասին խոսքը ասված է հնարավոր թյուրընկալումը կանխելու համար: Իսկ ինչ վերաբերում է այդ անվանումների իրական արժեքին, ապա դրանք զար-զար անլիարժեքություն, անճշություն ունեն: Օրինակ՝ ինչքան դժվար է հայ հին բանահյուսությունը և Ե. դարի թարգմանական ու ինքնուրույն մատենագրությունը միջնադարին վերագրելը, այնքան էլ դժվար է Նաղաշ Հովնաթանն ու Սայաթ-Նովան հայ հին գրականության ներկայացուցիչ ճանաչելը: Արդեն ինքը՝ Ներսիսյանը, հեղինակագիտական շրջանի մեր փառերգուների մասին խոսելիս ըստ հարկի օգտագործում է **միջնադարյան** բառը, իհարկե, առանց բառաձևին եզրույթի իմաստ հաղորդելու: Չխորանանք: Այս է պարզապես, որ բնագավառի համար սրելով լավ թրեպոմափիաները (արձակի, թե չափածոյի) կոչվում են «Հայ հին և միջնադարյան...» անվանումներով:

Ինչ վերաբերում է միջնադարյան ամփոփոխ և նոր ժամանակների սրել-ծագործ ոգին իրենց մեծ փառանդով սկզբավորող լուսավոր դեմքերի՝ Նաղաշ Հովնաթանի ու Սայաթ-Նովայի թեմաներին, ապա Ներսիսյանը միշտ նույն խորագրա մեկնաբանն է: Նրա թափանցուն իմաստավորմամբ մի կողմից ընթերցողին հասկանալի ու սիրելի է դառնում հայ ժողովրդի կենսապենչ ոգու զարնանային կենսահայտ չափերի ուժն ու գեղեցկությունը՝ Հովնաթանի սիրտ վայելքի ու խնջույքի փառերով և մյուս կողմից նույն ժողովրդի զգացմունքների մարդասիրական վեհ գույներն ու աշխարհաճանաչման ազնվականությունը՝ ի դեմս Սայաթ-Նովայի սիրերգության:

Ի դեպ՝ նոր ժամանակների խոր զգացողությամբ չի՞ գրված նրանցից առաջինի կրքսեր ժամանակակից և երկրորդին նախորդած Պաղտասար Դպիրի հոչակավոր «սիրերգը»՝ «Ի ննջմանեղ արքայական...» սկսվածքով, ազգային զարթոնքի ցնցող, վարակիչ հույզերով հորինված:

...Արծառնովոդ նյութին՝ լինի գրական դեմք, թե երեսույթ արվում է հարակ հավասարակշռված, լիարժեքությամբ հարկանշվող արժեքավորում և ողջը՝ ցանկալի չափերով ինքնաբուխ, անճիգ լեզվամրածողությամբ:

...Ասելիքի, ասքի չափեր ուներ Ներսիսյանի սայաթնովապաշտությունը և այդ չափերով մեծագույն սիրերգակին գնահատող գրականագետի մշակած հերթական հրաշալի թեմայից արտահայտվելու փոխարեն նրա՝ սայաթնովյան մի բնագրային ճշման փաստից եմ խոսում:

Սայաթ-Նովային նվիրված էջերում Ներսիսյանը կարող էր հրնթացս կամ փողարակում դյուրությամբ հիշեցնել նրա բնագրի անաղարտությունը վերականգնող իր ճշգրտման մասին:

Ներսիսյանը պարզել է, որ Սայաթ-Նովայի բնագրում **խալի** բառը գրգռական վրիպակ չէ, **խալխի** չէ, որ «խալի» արաբերեն բառը նշանակում է **զգվելի, գարշելի, գեշ...** և «խալի սուրը» նշանակել է զգվելի, գարշելի սուր: Իսկ «խալխի սուրը» դարձվածքը սայաթնովյան չէ: Լուսահոգի, հավեր երջանկահիշա-

րակ Գեորգ Ախվերդյանը, արաբերեն բառը չիմանալով, վրիպակ է կարծել եւ, առանց իմաստի մեջ խորանալու, «խալխի» դարձրել...

Մի ժլար փողափակով անգամ այս մասին հիշեցում չի կատարել:

ԶԷ՞ որ կարեւոր ճշտումը ձեռնարկով կշրջանառվեր ու արդեն մեկուկես դար արմափափորած աղավաղումը կվերանար, եւ Սայաթ-Նովայի խոսքը կարփահայեր **հանրային կյանքի բնութագրման իր բուն իմաստը**, ըստ որի ժամանակն է սպոր, հակամարդկային, եւ ոչ ժողովրդորդը (խալխը), որի նոքար է իրեն համարում բանաստեղծը.

Ղուրթս էնդուր ճամփա չէ գնում,
Շաքացիլ է խալի սուրը:

«Խալի սուրը» նրանց բերանում է, որոնք ժամանակը փնտրինողներ են եւ մարդու արժեքը գնահատում են նրա կրած հագուստով.

Ում հագին հին շալ ին փեսնում,
Էլ չին ասում թե էս ով ա...

Այս վերջում մի քանի խոսք ձեռնարկի համար անչափ կարեւոր մի հարցի մասին՝ հայ հին բանահյուսության նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքի. այն բանահյուսության, որի իմաստուն գոյությամբ է հայագիությունը հիմնավորել (ինչպես եւ ձեռնարկի հեղինակը) Ե. դարի մշակութային հրաշագործությունը:

Խոհեմ չէր լինի այս մասին ավելի վաղ խոսելը, մանավանդ, որ հեղինակը անմասն է դրանում: Ավելին, համոզված եմ, որ բնական վիճակում ներկայացնելուց հետո է հարցը հարմարեցվել ԳՆՃ ուսումնական ծրագրին: Նկատի ունենալով վիպանքի շնորհիվ նվաճված լեզվաարտահայտչական բարձր կարողությունները (տե՛ս էջ 10) Ներսիսյանը համոզւորեն պարճառաբանում է հայոց մարենագրության Ոսկեդարը այն դեպքում, երբ նման երեւոյթ տեղի չի ունեցել ուրիշ ժողովուրդների մշակույթների զարգացման պայմանության մեջ: Վիպանքի այդ բարձր նպաստը նկատի ունենալով՝ Ներսիսյանը գրում է. **«Նայ գրերի ստեղծումից անմիջապես հետո սկզբնավորվում է հայագիր գրականությունը եւ զարգանում այնպիսի արագ վերելքով ու բացառիկ բարձր մակարդակով, որ իր նմանը չունի ուրիշ մշակույթների պայմանության մեջ»** (15):

Նին բանահյուսությանը տրված բարձր գնահատականները շարունակվել են ձեռնարկի հաջորդող էջերում, կարծես ճշալով, որ հայ հին գրականության դասընթացը ոսկեդարյան հեղինակներով սկսելը բարի ցանկություն է լոկ:

Ե. դարի հեղինակները հայ բազմադարյան մարենագրության հիմնախա-

րիսխ ոսկեհուռ սյունն են խորհրդանշում, իսկ հին վիպասանքը այդ նվիրական խառիսխ-սյան հիմնարկեր-վկայարանն է իր վաղնջական, պարմական փեղով:

Ինչ վերաբերում է ձեռնարկում այդ պարմական փեղը վերականգնելուն, ապա այն դյուրությամբ կարվի, երբ նրա վերահրապարակման հարցը ծագի: Առանց ձեռնարկին բառ ավելացնելու եւ նրանից բառ պակասեցնելու կարելի է վիպանքի հիանալի մշակված թեման իր ներկա փեղից «Առաջաբան» փեղափոխել, իսկ թեմայի ներածականի երեք-չորս նախադասությունները իրենք են աչքի ընկնում...

Ամփոփելով գրախոսականս՝ հարկ եմ համարում թարմացնել խոսքս, որի ԳՆՃ մի ողջ գործունեության ընթացքում եղած հայ հին (ու միջնադարյան) գրականության ձեռնարկի պահանջը լուծվել է այն շրջանում, երբ հնամենի կրթական ակտիվը հիմնովին վերակառուցվել-վերակառուցվում է ըստ իր գիտակրթական նոր՝ համալսարանական կարգավիճակի:

Ձեռնարկը սրելով է ԳՆՃ-ում երբեմն դասավանդած լավագույն մասնագետներից մեկի՝ Վարազ Ներսիսյանի կողմից, որ նման գործի համար ցանկալի ունակությունների ու կարողությունների հետ միասին ճանաչվել է իր մարդկային առաքինի ու ասպետական բարքերով:

Չեմ կարող չասել, որ ձեռնարկն իր համակարգով ու բովանդակավորմամբ, մանավանդ թեմաների մշակման արհեստավարժությամբ հիշեցնում է սրբապաշտան քանդակաւոր վեմերով կառուցված, մեր հոյակերպ փառաբաները: Այս առումով ցանկանում են մի նվիրական խորհուրդ փնտել ասվածի եւ Վարազ Ներսիսյանի՝ Նայ Առաքելական Եկեղեցու համեստ սպասավորի քահանայի թոռ լինելու փաստի միջոց: Դրանից է, ասես, որ ներքին, հոգեկան մի խաղաղություն է թեւածում նրա մշակված թեմաների վրայով եւ խաղաղությամբ ու իմաստությամբ համակում ընթերցողին, ինչպես նվիրական ոգին՝ մեր վեհակերպ փառաբանների կամարների փակ թեւածող...

Սրելով է մնայուն ու անկրկնելի ձեռնարկ, որպիսիք սրելով եւ կոչումն ունեցող մարդիկ հաճախ չեն աշխարհ գալիս:

ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ